ԿԼՈՐ-ՍԵՂԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

2018 թ. հունիսի 22-ին տեղի ունեցավ «Նոր սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից կազմակերպված կլոր-սեղան քննարկումը՝ Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության, խտրականության դրսևորումների, դրանց դեմ ուղղված իրավապաշտպան գործունեության և առողջության պահպանման վերաբերյալ:

«ԻՆՉՊԵ՞Ս ԳՏՆԵԼ ՈՒՂԻՆ» ԵՐԿՕՐՅԱ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

2018 թ.-ի հունիսի 28-ից 29-ին տեղի ունեցավ «Խտրականության դեպքերի իրավիճակային դիտարկում» երկօրյա աշխատանքային հանդիպումը:

«ՉԼՄ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ՍԵՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ»

2018թ.-ի հունիսի 29-ից 30-ին տեղի ունեցավ «ՉԼՄ ներկայացուցիչների կարողությունների զարգացում» 4-անգամյա դասընթացաշարի երկրորդ փուլը՝ «Սեռականություն» թեմայով:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

ՀՀ Ազգային Ժողովում 2018թ.-ի հուլիսի 10-ին ժամը 14:30-ին տեղի ունեցավ <<Միացյալ Առաջնորդների Պալատ>> ԵՀԿ-ի կողմից կազմակերպված <<Երիտասարդների դերը քաղաքական ոլոտում>> թեմայով քննարկում Ազգային Ժողովի պատգամավոր Վահե Էնֆիաջյանի հետ:

ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՄԱՔԱՅԼ #33

Գերմանիայից Երևան ժամանեց Բավարիայի շրջանի երիտասարդական խորհրդի աշխատակազմը

2018թ.-ի հուլիսի 22-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպության (այսուհետ նաև ՆՍՀԿ) հրավերով Գերմանիայից Երևան ժամանեց Բավարիայի շրջանի երիտասարդական խորհրդի աշխատակազմը (այսուհետ նաև BJR աշխատակազմ): Այցի հիմնական նպատակն էր քննարկել Հայաստանում առկա երիտասարդական խնդիրներն ու կարիքները, փոխանակվել փորձով և գտնել համագործակցության եզրեր:

Հայաստան այցելած հյուրերի համար ՆՍՀԿ-ի կողմից նախապես կազմվել էր հանդիպումների, քննարկումների և ճանաչողական այցերի շարք:

2018թ.-ի հուլիսի 23-ին BJR աշխատակազմը հյուրընկալվեց ՆՍՀԿ գրասենյակում, ծանոթացավ ՆՍՀԿ ինչպես ընթացիկ, այնպես էլ իրականացված ծրագրերին և աշխատանքներին: Երկու Կազմակերպությունների ներկայացուցիչներն էլ բարձրաձայնեցին իրենց հուզող խնդիրները, ներկայացրեցին առաջարկներ և ուրվագծեցին հետագա համագործակցության շրջանակները:

Օրվա երկրորդ կեսին հյուրերը հանդիպում-քննարկում ունեցան նախ Հարավային Կովկասի հայաստանյան «Հենրիխ Բոյլ» հիմնադրամի, ապա նաև Հայաստանում Գերմանիայի դեսպանատան ներկայացուցիչների հետ:

Գերմանիայից Երևան ժամանեց Բավարիայի շրջանի երիտասարդական խորհրդի աշխատակազմը

2018թ.-ի հուլիսի 24-ին հյուրերի համար կազմակերպվեց այցելություն Հայոց ցեղասպանության հուշահամալիր և թանգարան, որտեղ նրանք, ծաղիկներ դնելով, հարգանքի տուրք մատուցեցին 1.5 միլիոն անմեղ զոհերի հիշատակին:
Օրվա երկրորդ կեսին տեղի ունեցավ հանդիպում Հայաստանի Սպորտի և երիտասարդության հարցերի փոխնախարար Քրիստինե Ասատրյանի, Երիտասարդական քաղաքականության վարչության պետ Թամարա Թորոսյանի, «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի և BJR աշխատակազմերի միջև: Հանդիպման հիմնական նպատակն էր երիտասարդական հիմնախնդիրների լուծման գործընթացում ներգրավել ինչպես հասարակական կազմակերպություններին, այնպես էլ պետական մարմիններին:
Հայաստանի Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ներկայացուցիչների հետ հանդիպմանը հաջորդեց ՀՀ-ում գործող երիտասարդական ՀԿ-ների հետ հանդիպումը: Այս հանդիպման ընթացքում ՀԿ-ների ներկայացուցիչները հյուրերին ներկայացրեցին այն հիմնական խնդիրներն ու սահմանափակումները, որոնց բախվում են
Հ
Բ
ի լուծ

2018թ.-ի հուլիսի 25-ը մեկնարկեց ճանաչողական այցով դեպի Խոր Վիրապ վանական համալիր: Այնուհետև հյուրերը վերադառնալով Երևան, այցելեցին Սերգեյ Փարաջանովի տուն-թանգարան և Մատենադարան:
2018թ.-ի հուլիսի 26-ին ՆՍՀԿ և BJR ներկայացուցիչներն այցելեցին Սևանավանք, այնուհետև ՆՍՀԿ-ի կողմից կազմակերպվեց հյուրասիրություն Սևանա լճի ափին: Հաջորդիվ տեղի ունեցավ այցելություն ՀՀ Տավուշի մարզում գտնվող Հաղարծին վանական համալիր:
Օրվա վերջում BJR աշխատակազմը կրկին հյուրընկալվեց ՆՍՀԿ գրասենյակում, որտեղ էլ միմյանց նվերներ տալուց հետո Կազմակերպությունների միջև՝ ՆՍՀԿ նախագահ Սերգեյ Գաբրիելյանի և Բավարիայի շրջանի Երիտասարդական խորհրդի նախագահ Մաթիաս Ֆաքի կողմից ստորագրվեց փոխհամագործակցության հուշագիր:

Էջ 2

Հուշագրի շրջանակներում, ի թիվս այլ գործողությունների, նախատեսված էր նաև ՆՍՀԿ աշխատակազմի 3 անդամների այցելությունը Գերմանիայի Դաշնային Հանրապետություն՝ արդեն իսկ ձևավորված համագործակցությունն ամրապնդելու և Գերմանիայի փորձին ծանոթանալու նպատակով:



BJR Bayerischer Jugendring

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» Հումանիտար կազմակերպություն Հասարակական կազմակերպության կարգավիճակով գրանցված

«NEW GENERATION» Humanitarian Non-Governmental Organization

Memorandum of understanding

The two organizations

- "New Generation" Humanitarian NGO (NGNGO; Yerevan, Armenia), represented by president Sergey Gabrielyan
- Bavarian Youth Council (BJR; Bavaria, Germany), represented by president Matthias Fack

met from July 22-27, 2018 in Yerevan as part of delegation program to discuss their strategy for a future cooperation. Both sides confirm, that they enrich each other by sharing their experiences and competences to build up a strong and sustainable youth policy as well as structures that allow youngsters to take part in educational valuable youth exchanges with meaningful contents.

Therefore, the organizations declare their intent to sign a memorandum of understanding during the General Assembly of the BJR from October 19-21, 2018 in Gauting (Bavaria) with the following contents:

- a strategic partnership, especially to apply for further fundings to improve and extend their programs,
- focus on intercultural exchange to promote peace and understanding – creating the basis for open-minded, compassionate interaction,
- develop common projects, e. g. on human rights and democracy

Therefore, BJR invites three representatives of NGNGO to its General Assembly in October.

Yerevan, July 26, 2018

Sergey Gabrielyan
President of "New Generation"
Humanitarian NGO

Matthias Fack
President of Bavarian Youth Council

ԿԼՈՐ-ՍԵՂԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

2018 թ. հունիսի 22-ին տեղի ունեցավ «Նոր սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից կազմակերպված կլոր-սեղան քննարկումը՝ Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության, խտրականության դրսևորումների, դրանց դեմ ուղղված իրավապաշտպան գործունեության և առողջության պահպանման վերաբերյալ:

Հանդիպմանը ներկա էին Հայաստանում Չեխիայի հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան պարոն Պետր Միկիսկան, Նորվեգիայի Հելսինկյան Կոմիտեի ներկայացուցիչ Լենե Վեթելանդը, ՀՀ-ում ԵՄ պատվիրակության, ՀՀ առողջապահության նախարարության ներկայացուցիչները, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ղեկավար Արթուր Սաքունցը և այլ պատվավոր հյուրեր, միջազգային և տեղական կառույցների ու կազմակերպությունների, ինչպես նաև ԼԳԲՏԻ համայնքի

Հանդիպում-քննարկման նպատակն էր պետական պաշտոնյաների, դիվանագիտական ներկայացուցչությունների, տեղական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների շրջանում բարձրացնել իրազեկությունը խտրականության դեպքերի, դրանից բխող հանցագործությունների և ոչ պատշաճ վերաբերմունքի, առողջապահական ծառայությունների հասանելիության ապահովման և առկա օրենսդրական բացերի լրացման անհրաժեշտության վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել առաջարկությունների փաթեթ բարձրաձաֆ ցյնված խնդիրների լուծման համար:

Մինչև հանդիպման բուն քննարկմանն ու օրակարգին անցնելը բացման խոսքով հանդես եկան ՆՍՀԿ նախագահն ու մի շարք հյուրեր:
ՆՍՀԿ նախագահ Սերգեյ Գաբրիելյանը պաշտոնատար անձանց, տարբեր խմբերի ներկայացուցիչներին՝ հանդիպմանը ներկա գտնվելու և համագործակցության պատրաստակամության համար:
Հայաստանում Չեխիայի Հանրապետության դեսպան պարոն Պետր Միկիսկան շնորհակալություն հայտնեց հրավերի համար, ընդգծեց դեսպանության պատրաստակամությունը համագործակցելու Հայաստանի քաղաքացիական հասարակությունների հետ՝ խտրականության դեմ ուղղված գործողությունների շրջանակներում, խոստացավ լինել իրադարձությունների կենտրոնում և նոր համագործակցություններ ի հույս հայտնեց:
Նորվեգիայի Հելսինկյան կոմիտեի ներկայացուցիչ Լենե Վեթելանդը նշեց, որ նոր է ժամանել

հայտնեց, որ մի օր էլ Հայաստանում կլինի ազատություն և բազմակարծություն:
Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ղեկավար Արթուր Սաքունցը կարևորեց բազմազանությունը՝ որպես բնականոն և ի սկզբանե տրված հատկանիշ: Պարոն Սաքունցը նշեց նաև, որ ստեղծված նոր իրավիճակում շատ մեծ գործ կա անելու՝ սկսած կրթական հաստատություններից: Նշվեց նաև, որ նոր կառավարությունից հույսերը մեծ են , և բոլորս մեզ կարող ենք թույլ տալ ավելի օպտիմիստ լինել:
Հայաստանում ԵՄ պատվիրակության ներկայացուցիչն իր խոսքում հատկապես շեշտեց այն միտքը, որ բոլորս ծնվել ենք հավասար և բոլորս հավասար իրավունքներ ունենք: Նա շեշտեց նաև երիտասարդության կրթության կարևորությունը հասարակության մեջ հավասարության ապահովման գործում:

Հանդիպման հիմնական մասում ՆԳՀԿ իրավաբանները, փաստաբանները և փորձագետները հանդես եկան զեկույցներով.

- **ԱնահիտՄկրտչյան - «Խտրականության դեպքերի համապարփակ զեկույց»**
- **Արա Ղարագյոզյան - «Խտրականության հիմքով քրեական գործեր»**
- **Մարո Խաչատուրյան- «Խտրականության հիմքով քաղաքացիական և վարչական ռազմավարական գործեր»**
- **Հայկուհի Հարությունյան - «Գենդերային վերափոխության իրավական ճանաչման մասին» օրենքի նախագիծ, «ԳԲՏ անձանց արյան դոնորության սահմանափակումների վերացման մասին» նախագիծ**
- **Ահարոն Բարսեղյան - «ՏՍՏ և տրանս անձանց համար ՄԻԱՎ-ին առնչվող ծառայությունների ազգային ֆինանսավորման բացերի գնահատում»**
- **Ալիկ Ուստյան - «ՏՍՏ անձանց համար ՄԻԱՎ-ին առնչվող ծառայությունների կասկադի վերաբերյալ ազգային զեկույց»**

Զեկույցների համապատասխան հատվածներում երկու տրանս անձինք ներկայացրին իրենց անձնական օրինակը, թե ինչպես են խտրականության առնչվել իրենց սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով՝ ադրադառնալով իրենց քրեական գործերին, իրենց նկատմամբ ոստիկանության աշխատակիցների և դատական մարմինների ցուցաբերած խտրական վերաբերմունքին և իրենց իրավունքների ոտնահարմանը:
Առողջապահության նախարարության ներկայացուցիչ, Գլոբալ հիմնադրամի ծրագրերը համակարգող խմբի ղեկավար Հասմիկ Հարությունյանն ընդունեց, որ շատ օրենսդրական և ենթաօրենսդրական բացեր կան, որոնք խանգարում են բժշկական և մասնագիտական տարբեր կարգավորումներ տալուն: Նշվեց, որ հնացած ակտեր են գործում:
Ներկայացուցիչը խոստացավ բոլոր հարցերը և առաջարկները ներկայացնել անձամբ նախարարին և համապատասխան գծով փոխնախարարներին:
Ներկայացուցչի համոզմամբ՝ մինչև 2019 թվականը համատեղ ջանքերով հնարավոր կլինի հասնել ցանկալի արդյունքներին և նպատակներին:
Հանդիպման ավարտին տեղի ունեցավ հարց ու պատասխան տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչների միջև:
Հանդիպումն անցավ ակտիվ քննարկման ու տեղեկատվության բաց փոխանցման միջավայրում, ինչը նպաստեց խնդիրների վերհանմանը, ինչպես նաև տարբեր իրավապաշտպան և առողջապահական կազմակերպությունների միջև փոխհարգանքի ամրապնդմանը:

Այս աշխատանքը կազմակերպվել էր «Առողջապահության գործընթացում խտրականության դեմ պայքար» և «ՏՍՏ անձանց իրավունքների պաշտպանության» և «ԼԳԲՏԻ անձանց իրավունքների խթանում հայաստանյան հասարակությունում» և «Առողջության իրավունք» ծրագրերի շրջանակներում Նորվեգիայի Հելսինկյան կոմիտեի, ԱՄՆ ՄԶԳ-ի և ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի ֆոնդերից ֆինանսավորվող՝ Տղամարդկանց առողջության Եվրասիական կոալիցիայի ֆինանսական աջակցությամբ:

2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-29 ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԼԱՅՖ-6 ԱՐՏԱԳՆԱ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՐԹԱԿԸ, ՈՐՆ ԱՅՍ ԱՆԳԱՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԷՐ ՏՐԱՆՍ ՍԿՍՆԱԿ ԱԿՏԻՎԻՍՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ:

ԼԱՅՖ-6 արտագնա տեղեկատվական հարթակի նպատակն է Տրանս համայնքի ներկայացուցիչների շրջանում բարձրացնել սեռականության և առողջության իրավունքի վերաբերյալ գիտելիքների մակարդակը, նպաստել իրավագիտակցության բարձրացմանը, ծանոթացնել իրավունքների պաշտպանության ներպետական և միջազգային մեխանիզմներին, ինչպես նաև նպաստել համայնքների ներգրավվածությանը ՄԻԱՎ-ին հակազդման ազգային մարմիններում:

«Առողջության իրավունք» ծրագրի համակարգող Արտյոմ Մովսեսյանը, ողջունելով մասնակիցներին ներկայացրեց ծրագրի նպատակն ու խնդիրները, իրականացված և իրականացվելիք գործողությունները, ինչպես նաև ԼԱՅՖ արտագնա տեղեկատվական հարթակի նպատակները:

Տեղեկատվական հարթակի առաջին օրը սեռականության փորձագետ Ալիկ Ուստյանը ներկայացրեց «Սեռականության սահմանումը և բաղադրիչները», «Կենսաբանական սեռ», «Սեռային ինքնություն և սեռական վարքագիծ», «Սեռական կողմնորոշում և նրա տեսակները», «Գենդեր և նրա տեսակները», «Գենդերային արտահայտում», «Գենդերային դերեր», «Գենդերային կարծրատիպեր», «Տրանսգենդերություն, տրանսգենդերություն»



Առաջին օրն անցկացվեց նաև Պլենար նիստ, որին հրավիրված փորձագետներն են Տղամարդկանց առողջության եվրասիական կոալիցիայի մոնիթորինգի և գնահատման մասնագետ Մաքսիմ Կասյանչուկը և «Առաքելություն արևելք» ՄՕԿ մոնիթորինգի և գնահատման մասնագետ Սոնա Օրբելյանը:

Պլենար նիստի փորձագետները մասնակիցների հետ զրուցեցին տրանս համայնքի ներկայացուցիչների դերի մասին համայնքի զարգացման գործընթացում: Հատկանշական է նաև, որ Մաքսիմ Կասյանչուկն իր խոսքում նշեց, որ Հայաստանում սա իր առաջին անմիջական շփումն էր տրանս սեքս աշխատողների հետ:
Արտագնա տեղեկատվական հարթակի երկրորդ օրը ՆՍՀԿ իրավաբան, «Առողջության իրավունք» ծրագրի Իրավական խոչընդոտների հաղթահարման մասնագետ Անահիտ Մկրտչյանը ներկայացրեց պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման, ինչպես նաև ՀՀ բժշկական հիմնարկներում բժշկական անձնակազմի ցածր իրավագիտակցության և ԼԳԲՏ+ անձանց առնչվող բժշկական գիտելիքների ցածր մակարդակին, բժշկական անձնակազմի կողմից դրսևորվող խտրական վերաբերմունքին և խտրականության հաղթահարման մեխանիզմներին առնչվող իրավական կարգավորումները: Հանդիպման ողջ ընթացքն ուղեկցվում էր տեսահոլովակների դիտմամբ և գործնական աշխատանքներով:
ԼԱՅՖ-6 արտագնա տեղեկտավական հարթակի ավարտին մասնակիցներին հանձնվեցին վկայագրեր:

«Առողջության իրավունք» ծրագիրն իրականացվում է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից և ֆինանսավորվում է Տղամարդկանց Առողջության Եվրասիական Կոալիցիայի (ECOM) միջոցով, ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ Հիմնադրամի ֆոնդերից:

«ԻՆՉՊԵ՞Ս ԳՏՆԵԼ ՈՒՂԻՆ» ԵՐԿՕՐՅԱ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

2018 թ.-ի հունիսի 28-ից 29-ին տեղի ունեցավ «Խտրականության դեպքերի իրավիճակային դիտարկում» երկօրյա աշխատանքային հանդիպումը:

Հանդիպմանը մասնակցում էին ՔՀԿ և ՁԼՄ ներկայացուցիչներ, փաստաբաններ, իրավապաշտպաններ և իրավաբաններ:
Հանդիպման առաջին օրը՝ հունիսի 28-ին, չեխ գործընկերները Poradna pro občanství, občanská a lidská práva կազմակերպությունից ներկայացրին «Խտրականության դեպքերի իրավիճակային դիտարկման» մեթոդը, դրա կիրառման ձևերը, կիսվեցին մեթոդի կիրառման իրենց փորձով, ներկայացրեցին խտրականության դեպքերը Չեխիայում և իրենց փորձը դրանք հաղթահարելու հարցում: Նյութի ներկայացումից հետո մասնակիցները տվեցին իրենց հուզող հարցերը և ստացան սպառիչ պատասխաններ:
Հանդիպման երկրորդ օրը՝ հունիսի 29-ին, Poradna pro občanství, občanská a lidská práva կազմակերպության ներկայացուցիչները ներկայացրին Չեխիայում Իրավունքների հանրային պաշտպանի դերը հակախտրականության պայքարում, ԼԳԲՏ համայնքի իրավիճակը Չեխիայում և մասնակիցների հետ քննարկեցին, թե Հայաստանում խտրականության որ դեպքերի համար կիրառելի կլինի իրավիճակային դիտարկման մեթոդը:

Աշխատանքային հանդիպումը կազմակերպվել է Poradna pro občanství, občanská a lidská práva կազմակերպության կողմից «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի հետ համատեղ Չեխիայի Հանրապետության արտաքին գործերի նախարարության ֆինանսական աջակցությամբ իրականացվող Անցումային Առաջխաղացման Ծրագրի շրջանակներում:

«ԶԼՄ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ՍԵՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ»

2018թ.-ի հունիսի 29-ից 30-ին տեղի ունեցավ «ԶԼՄ ներկայացուցիչների կարողությունների զարգացում» 4-անգամյա դասընթացաշարի երկրորդ փուլը՝ «Սեռականություն» թեմայով:

Երկրորդ օրը ներկայացվեցին «Գենդերի հասկացությունը և սահմանումը», «Գենդերային արտահայտում: Գենդերային դերեր», «Գենդերային կարծրատիպեր», «Տրանսգենդերության կոմպոնենտները», «Սեռական կողմնորոշման դրսևորումները տրանսգենդեր անձանց մոտ» թեմաները:

Դասընթացը հագեցած էր ակտիվ հարց ու պատասխանով, ինտերակտիվ վարժանքներով, տեսանյութերի և սպիհիկաշարի դիտումով:

Դասընթացն իրականացվում է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացվող «Կարողությունների զարգացում և հզորացում՝ հանուն Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանության» ծրագրի շրջանակներում, Նորվեգիայի Հելսինկյան Կոմիտեի ֆինանսական աջակցությամբ:

ԼԳԲՏ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՀԶՈՐԱՑՈՒՄ ՍԵՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ

2018թ.-ի հուլիսի 14-ից 15-ը տեղի ունեցավ «ԼԳԲՏ ներկայացուցիչների կարողությունների զարգացում և հզորացում սեռականության, մոնիթորինգի և հաշվետվողականության ոլորտներում» երկօրյա դասընթացը, որը կազմակերպվում է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից:

Դասընթացի ընթացքում մասնակիցները ուսումնասիրեցին հետևյալ թեմաները

***Սեռականություն**
***Մոնիթորինգ և հաշվետվողականություն**

Դասընթացի առաջին օրը դասընթացավար Դիանա Տեր-Ստեփանյանը ներկայացրեց հետևյալ թեմաները՝

***Մոնիթորինգ: Սահմանումներ և բնութագիր,**
***Մոնիթորինգի գործիքներ,**
***Զեկույց: Սահմանումներ և բնութագիր,**
***Զեկույց գրելու հմտություններ:**

Երկրորդ օրը մասնակիցները ծանոթացան «Սեռականություն» թեմային:

Թեմայի շրջանակներում, դասընթացավար Ալիկ Ուստյանը ներկայացրեց հետևյալը.

***Սեռականություն: Սահմանում և բաղադրիչներ,**
***Կենսաբանական սեռ: Սեռային ինքնություն, սեռական վարքագիծ,**
***Գենդեր: Գենդերային արտահայտում: Գենդերային դերեր,**
***Գենդերային կարծրատիպեր,**
***Տրանսգենդերության կոմպոնենտները:**

Դասընթացի տեսական նյութի ներկայացումը ուղեկցվեց նաև տեսահոլովակների դիտումներով և ինտերակտիվ վարժանքներով, որոնց միջոցով մասնակիցներն առավել դյուրին ընկալեցին մատուցվող թեման:

Դասընթացն իրականացվում է «Կարողությունների զարգացում և հզորացում՝ հանուն Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանության» ծրագրի շրջանակներում, Նորվեգիայի Հելսինկյան Կոմիտեի ֆինանսական աջակցությամբ:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

ՀՀ Ազգային Ժողովում 2018թ.-ի հուլիսի 10-ին ժամը 14:30-ին տեղի ունեցավ <<Միացյալ Առաջնորդների Պալատ>> ԵՀԿ-ի կողմից կազմակերպված <<Երիտասարդների դերը քաղաքական ոլորտում>> թեմայով քննարկում Ազգային Ժողովի պատգամավոր Վահե Էնֆիաջյանի հետ:

Հանդիպմանը մասնակցում էր նաև «Նոր Սերունդ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպության իրավաբան Անահիտ Մկրտչյանը:

Վերջինս իր ելույթում պատգամավորի ուշադրությանը ներկայացրեց ՀՀ օրենքներում առկա վիրավորական և խտրական տերմինների ցանկը, որոնք վաղուց դուրս են եկել շրջանառությունից և հակասում են միջազգային չափորոշիչներին:

Ի պատասխան պատգամավոր Վահե Էնֆիաջյանի այն հարցին, թե արդյոք բացի տերմինալոգիայի հետ կապված խնդրից, նկատվում է նաև բովանդակային խնդիրներ, իրավաբան Անահիտ Մկրտչյանը մատնանշեց մի քանի խնդիրներ, ինչպիսիք են՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2013թ.-ի, փետրվարի 7-ին N 06-Ն հրամանի 2-րդ հավելվածի 1-ին հոդվածի 15-րդ կետի ա) ենթակետը, որը որպես դոնացիան բացառող մշտական հակացուցում նախատեսում է արվամոլությունը, «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքը, որում որպես խտրականության հիմք նախատեսված չեն սեռական կողմնորոշումն ու գենդերային ինքնությունը և այլն:

Պատգամավոր Վահե Էնֆիաջյանը հաշվի առնելով առաջարկների կոնկրետությունն ու հստակությունը առաջարկեց ունենալ լրացուցիչ հանդիպում, առաջարկները փորձագետների խմբի հետ քննարկելու համար:

«NEW GENERATION» Humanitarian Non-Governmental Organization

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպություն

Ժամանակին Համաքայլ ամսագիրը պարունակում է տվյալ ամսում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացված գործունեության համապարփակ նկարագիրը: